ՀՀ Ազգային ժողովում շարունակվում է ՀՀ 2013 թ. պետական բյուջեի նախագծի քննարկումը: Բյուջե 2013-ի գաղափարախոսությունն ու հիմնական սկզբունքներն Աժ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում ս.թ. հոկտեմբերի 30-ին ներկայացրել է ՀՀ վարչապետ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ

2013 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ.

«Ծրագրի ռիսկերը և դրանց կառավարման հնարավորությունները»

Ես կփորձեմ ներկայացնել 2013 թ. պետական բյուջեի նախագծի փիլիսոփայությունը, այն սկզբունքային կետերը, որոնց վրա խարսխված է պետական բյուջեն: Նախ ցանկանում եմ անդրադառնալ 2012 թ. ստեղծված իրավիճակին, որն ստեղծում է նախադրյալներ, նախապայմաններ 2013 թ. պետական բյուջեի կատարման համար: Այս պահի դրությամբ մենք ամփոփել ենք Ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված պաշտոնական տվյալները և սեպտեմբեր ամիսը ներառյալ կարող ենք արձանագրել, որ ունենք մոտավորապես 7 տոկոսանոց տնտեսական աճ, իսկ բյուջեի դեֆիցիտը, որը ծրագրված էր 3.1 տոկոս, ըստ մեր գնահատականների, կլինի ավելի ցածր, 2.8 տոկոս: Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և մեր մասնագետների գնահատականներով և ԾԻԳ-երի տնօրենների հետ անցկացված խորհրդակցության արդյունքում տեսնում ենք, որ իրականում բյուջեի դեֆիցիտը մի փոքր ավելի ցածր կլինի: Պետական բյուջեի եկամտային մասը մենք ամբողջությամբ կատարում ենք և դա նշանակում է, որ այս թվերը, որ ես ձեզ ներկայացրեցի, իրատեսական են: Դրա հիման վրա էլ մենք կատարում ենք 2013 թ. պետական բյուջեի կանխատեսումները:

Բյուջեի նախագծի առանձնահատկությունն այն է, որ առաջին անգամ ձեզ ենք ներկայացնում մի փաստաթուղթ, որը կոչվում է **«Ծրագրի ռիսկերը և դրանց կառավարման հնարավորությունները»**: Նախկինում մենք խոսում էինք ռիսկերի երևույթների, ուղղությունների, դրանց կանխարգելման միջոցառումների մասին, այս անգամ փորձում ենք թվային գնահատականներ ներկայացնել, թե այդ ռիսկերն ինչպես կարող են դրսևորվել, և այդ պարագայում ինչպես ենք այդ ռիսկերը կառավարելու:

2013 թ. պետական բյուջեի նախագիծը հիմնված է երեք կարևորագույն սկզբունքների վրա: Դրանք այն սկզբունքներն էին, որ մենք ներկայացրել էինք ձեր դատին կառավարության ծրագիրը հաստատելու ժամանակ: Մասնավորապես, առաջին սկզբունքը տնտեսության մրցունակության ապահովումն է, երկրորդը՝ մարդկային կապիտալի զարգացումը, երրորդը՝ արդյունավետ ինստիտուտների առկայությունը: Դա նշանակում է, որ մենք ձեր դատին ներկայացնում ենք ծրագրային բյուջետավորման սկզբունքով նախագիծ: **Միևնույն ժամանակ 2013 թ. բյուջեում թիրախավորել ենք հետևյալ չորս կարևոր նպատակները.**

Առաջինը՝ տնտեսական աճի պահպանումն է, որի միտումները վերջին երկու տարիներին տեսնում ենք: Այս տարվա կտրվածքով տեսնում ենք, որ շուրջ 7 տոկոսանոց տնտեսական աճի ցուցանիշը դառնում է իրատեսական: Մեր խնդիրն է լինելու՝ 2013 թ. պահպանել բարձր տնտեսական աճի ցուցանիշը և հստակ միջոցառումներ իրականացնել տնտեսության դիվերսիֆիկացիայի խորացման համար: Մեր ծրագիրն այդ առումով ուղղված է արտահանման խրախուսմանը և դրա ծավալների ավելացմանը:

Մեր քաղաքականության մեջ **երկրորդ շեշտադրումը սոցիալական քաղաքականությունն է,** որտեղ արմատական փոփոխություններ ենք առաջարկում: Մասնավորապես, սոցիալական քաղաքականության մեջ անցում ենք կատարում հետևյալ սկզբունքին. սոցիալապես խոցելի խավերի համար պետք է ստեղծենք հնարավորություններ՝ կրթություն ստանալու, աշխատանք ձեռք բերելու, այդ թվում նաև՝ պետության միջոցների հաշվին վերապատրաստման ծրագրերին մասնակցելով: Երաշխավորելու ենք նրանց համար առողջապահական ապահովվածությունը, և միայն վերջին հերթին շեշտադրումն արվում է լրացուցիչ սոցիալական նպաստների ավելացման վրա:

Այս արմատական փոփոխությունները մեր քաղաքականության մեջ պայմանավորված են այն ուսումնասիրություններով, որ կատարվել են Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Երբ սոցիալական նպաստների աճի տեմպը գերազանցում է այլ չափանիշների աճի տեմպին, մասնավորապես, երբ մարդկանց աշխատավարձի աճի տեմպը լինում է ավելի ցածր, քան սոցիալական նպաստների, թոշակների աճի տեմպը, մարդկանց մոտ խթաններ չեն լինում իրենց խնդիրներն աշխատանքով լուծելու համար: Նրանք իրենց կենցաղային չափանիշները փորձում են համապատասխանեցնել պետության սահմանած չափանիշներին, որպեսզի օգտվեն սոցիալական նպաստներից, և աշխատելու մոտիվացիան էապես խաթարվում է: Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ այդ ուսումնասիրությունները, որ կատարվել էին ոչ միայն Հայաստանում, հանգեցնում էին եզրակացության, որ մենք առաջին հերթին պետք է ապահովենք սոցիալապես խոցելի խավերի ներգրավվածությունը հասարակական կյանքում և նրանց առաջին հերթին ապահովենք աշխատանքով: Դրան է ուղղված նաև սոցիալական ինտեգրված ծառայության համակարգի ներդրումը, որը մենք սկսել ենք իրականացնել Համաշխարհային բանկի հետ: 2013 թ. առնվազն 10 կետեր պետք է Հայաստանի Հանրապետությունում սկսեն իրենց գործունեությունը: Դա հնարավորություն է տալու բացահայտել սոցիալապես խոցելի ընտանիքների իրական խնդիրները և թիրախային օժանդակություն ցույց տալ այդ ընտանիքներին: Որտեղ կան չափահաս երեխաներ, որոնք ունեն կրթության հնարավորություն, պետությունը պետք է օգնի նրանց, որպեսզի աղքատությունը չլինի պատճառ, որ նրանք կրթություն չստանան: Այդպիսի ծրագրեր արդեն իսկ սկսել ենք իրականացնել. որտեղ անհրաժեշտ է իրավական խնդիրների խորհրդատվություն՝ տրամադրելու ենք խորհրդատուներ, որտեղ անհրաժեշտ է առողջապահական միջամտություն՝ պետությունն առաջին հերթին սոցիալապես խոցելի խմբերին է երաշխավորելու առողջապահական ծառայությունների հասանելիությունը: Եվ ինտեգրացված սոցիալական ծառայության ներդրումը մեզ օգնելու է լուծել այս խնդիրը: Կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ 2013 թ. մեր ուշադրության կենտրոնում ենք պահելու զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրվող նպաստները, որովհետև մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, ցավոք, դեռևս այս խումբը առա-



Սոցիալական քաղաքականության մեջ անցում է կատարվում հետևյալ սկզբունքին. սոցիալապես խոցելի խավերի համար պետք է ստեղծվեն կրթություն ստանալու, աշխատանք ձեռք բերելու հնարավորություններ, նաև պետության միջոցների հաշվին վերապատրաստման ծրագրերին մասնակցելով: Երաշխավորվելու է նրանց համար առողջապահական ապահովվածությունը, և միայն վերջին հերթին շեշտադրումն արվելու է լրացուցիչ սոցիալական նպաստների ավելացման վրա:

Ընդհանուր միջավայրի բարելավման և արդյունաբերական քաղաքականությունն իրականացնելու առումով կարևոր նշանակություն է տրվում պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքին: Թիրախավորվել են 12 ոլորտներ, որտեղ առկա է արտահանման մեծ ներուժ:

Առողջապահության ոլորտում ուշադրության կենտրոնում կլինեն մարզերում առողջապահական ծառայությունների որակի բարելավման խնդիրները, առողջապահական ժամանակակից կենտրոնների միջոցով նաև նպաստել մարզերի համաչափ զարգացմանը: Պետբյուջեի ֆինանսավորմամբ ծրագրվում է կառուցել 13 համայնքային ամբուլատորիա:

Կրթական բարեփոխումների շարունակական իրականացման հետ կիրականացվի դպրոցաշինության լայն ծրագիր:

2013 թ. սոցիալական փաթեթից օգտվողների թիվն ավելանալու է 30 հազարով:

Բյուջե 2013-ի եկամտի 120 մլրդ դրամի ավելացմամբ հարկային բեռի ավելացում չի նախատեսվում:

վել սոցիալապես խոցելի խումբն է, և այստեղ մենք իրականացնելու ենք թոշակների ավելացում: Միևնույն ժամանակ, 2013 թ. սոցիալական փաթեթից օգտվողների թիվն ավելացնելու ենք 30 հազարով: Այս նորամուծությունը, որ տեղի ունեցավ 2012թ., արժանացել է մեր բնակչության դրական գնահատականին, և մեր բոլոր այցելությունները, հանդիպումները մեր քաղաքացիների հետ ցույց են տալիս, որ մեր առջև խնդիր է դրվում ընդլայնել սոցիալական փաթեթից օգտվողների ծավալը, և մենք 2013 թ. շուրջ 30 հազարով ավելացնելու ենք այդ փաթեթից օգտվողների քանակը՝ պետական բյուջեում ապահովելով համապատասխան ֆինանսական միջոցներ:

Երրորդ ուղղությունը՝ գործարար և ներդրումային միջավայրի էական բարելավումն է: Դուք գիտեք, որ մենք շատ ուշադիր հետևում ենք Doing Business-ի, մրցունակության և տնտեսական ազատականության աստիճանի ինդեքսներին: Եվ ոչ միայն մենք, այլև դուք տեսնում եք, որ մեր հարևան պետությունների ղեկավարները նույնպես մեծ ուշադրություն են դարձնում այս գործոնին: 2013 թ.-ը մեզ համար այդ առումով պետք է լինի բեկումնային: Չնայած որ Doing Business-ով մենք բավականին լուրջ առաջընթաց արձանագրեցինք՝ 18 քայլով բարելավեցինք մեր դիրքը և 184 պետությունների շարքում հայտնվեցինք 32-րդ տեղում, բայց տեսնում ենք, որ մի քանի գործոններով դեռևս լուրջ անելիքներ ունենք: Մասնավորապես, բարելավել առևտրի պայմանները, որպեսզի ապրանքների արտահանման ծախսատարությունը Երևանից մինչև մոտակա նավահանգիստ լինի նվազագույն: Այսօր, ցավոք, Համաշխարհային բանկի կողմից ծախսատարությունը գնահատվում է բավական բարձր. մեկ կոնտեյների համար այն կազմում է 1800 դոլար, ներառյալ բոլոր ծառայությունները, այդ թվում բրոքերների ծառայությունը, որը բավականին թանկ է: Ինչպես նաև պետք է նվազեցնենք բյուրոկրատական բոլոր գործընթացները, քանի որ իրականության մեջ շատ ավելի շատ խոչընդոտներ կան արտահանողների համար, քան օրենսդրությամբ նկարագրված է և պրակտիկան այդտեղ պետք է էապես բարելավենք: Երկրորդ կարևորագույն խնդիրը մեզ համար հարկահավաքման գործընթացն է. շուրջ 40 քայլով այստեղ բարելավեցինք մեր դիրքը, բայց դեռևս հարյուրակի մեջ չենք մտնում և հարկային վարչարարության բարելավումը մեզ համար էական նշանակություն է ունենալու: Մանավորապես, դրան էապես կնպաստի հունվարի 1-ից էլեկտրոնային հաշվետվությունների ներդրումը՝ սկզբից խոշոր բիզնեսի, հետագայում բոլոր տնտեսվարողների համար, ընդ որում փոքր և միջին բիզնեսին պետությունը ֆինանսապես օժանդակելու է, որպեսզի տեղեկատվական տեխնոլոգիաների ներդումը նրանց վրա նվազագույն արժեք ունենա, մասնավորապես, փոքր բիզնեսի համար սուբսիսավորելու ենք էլեկտրոնային ստորագրության տրամադրումը, էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների հաղորդման գործընթացին նույնպես էապես օժանդակելու ենք: Միևնույն ժամանակ, մեզ համար կարևոր է դատական պրակտիկայի բարելավումը, որովհետև ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, դեռևս դատական վեճերի քննումը դատարաններում տևում է 400 օրից ավելի և հասկանալի է, որ այդ պատճառով տնտեսվարող սուբյեկտները կրում են լուրջ վնասներ ոչ միայն ժամանակի, այլև ֆինանսական: Հայաստանում դատական վեճերի քննարկման ծախսատարությունը դեռևս բավական բարձր է և այս ուղղությամբ անելիքներ ունենք: Այս տարի տարբեր տիպի թույլտվությունների գործընթացն էապես բարելավվել է, մասնավորապես շինթույլտվությունների առումով: Բիզնես միջավայրի բարելավման ուղղությամբ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի հասանելիությունը փոքր և միջին բիզնեսի համար էական նշանակություն է ունենալու:

Հաջորդ ֆունդամենտալ ուղղությունը բիզնես միջավայրի բարելավման առումով Խորը և համապարփակ ազատ առևտրի բանակցություններն են ԵՄ-ի հետ: Տեղյակ եք, որ այս տարի փետրվարին ԵՄ-ն հայտարարեց Հայաստանի Հանրապետության հետ պաշտոնական բանակցություններ սկսելու մասին և մենք արդեն իսկ բանակցությունների 6 փուլից երկուսն անցկացրել ենք, որտեղ արձանագրվել են մեր կողմից իրականացվող բարեփոխումները, պարտավորությունները՝ մեր օրենսդրությունը համապատասխանեցնելու եվրոպական չափանիշներին: Այդ բարեփոխումներն իրականացվելու են հետևյալ ուղղություններով. առաջինը սննդի անվտանգության բնագավառն է, որտեղ պարտավոր ենք այնպիսի մոնիթորինգի համակարգ ներդնել Հայաստանի Հանրապետությունում, որը համապատասխանում է եվրոպական լավագույն չափանիշներին: Պետք է ունենանք համապատասխան լաբորատորիաներ, մեթոդաբանություն՝ ինչպես է գնահատվում սննդի անվտանգությունը, պատրաստված կադրեր, և որ ամենակարևորն է՝ պրակտիկայում այդ բոլոր նորմերը պետք է կիրառվեն:

Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շրջանակում երկրորդ ուղղությունը վերաբերում է ինտելեկտուալ սեփականության գրանցմանը: Մեր օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ պետք է

Բյուջե 2013-ի կարևորագույն սկզբունքները

- Տնտեսության մրցունակության ապահովում
- Մարդկային կապիտալի զարգացում
- Արդյունավետ ինստիտուտների առկայություն

Բյուջե 2013-ի չորս կարևոր նպատակները

- Տնտեսական աճի պահպանում
- Սոցիալական քաղաքականության բնագավառում արմատական փոփոխությունների իրականացում
- Գործարար և ներդրումային միջավայրի էական բարելավում
- Մակրոտնտեսական կայունության ապահովում

իրականացնենք, պետք է ընդունենք նորմատիվ ակտեր և այստեղ նույնպես ամենակարևորը կայանում է նրանում, որ իրավապահ մարմինները, դատական համակարգը պրակտիկայում պետք է գործառույթներ իրականացնեն ինտելեկտուալ սեփականության պաշտպանության ուղղությամբ:

Երրորդը՝ դատական պրակտիկայի կատարելագործումն է, մասնավորապես, տնտեսական վեճերի քննարկման ուղղությամբ: Այստեղ նույնպես ունենք ստանձնած պարտավորություններ:

Եվրոպական միության կողմից ներկայացվող լավագույն չափանիշների ներքո չորրորդ ուղղությունը մաքսային կատարելագործումն է՝ կանաչ ուղու ռեժիմի ներդրումը, ինվոյսային գների կարգավորումը: Այս բարեփոխումները և պարտավորությունները, որոնք ստանձնել ենք, մտադիր ենք ամբողջությամբ իրականացնել 2013 թ.: Ինքներս մեզ համար սահմանել ենք այնպիսի թիրախ, որպեսզի 2013 թ. ընթացքում ամբողջությամբ ավարտենք բոլոր բանակցային փուլերը և դրանց շրջանակում արձանագրենք, որ մեր կողմից ստանձնված պարտավորությունները կատարված են: Չնայած ֆորմալ պարտավարությունները ենթադրում են, որ մենք այդ բանակցային գործընթացը պետք է ավարտենք 2014 թ., բայց մենք մեր առջև խնդիր ենք դրել ավարտին հասցնել 2013 թ. ընթացքում:

Ընդհանուր միջավայրի բարելավման և արդյունաբերական քաղաքականությունն իրականացնելու առումով կարևոր նշանակություն ենք տալիս պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքին: Տեղյակ եք, որ արդյունաբերական նոր քաղաքականությունը, որը մշակեցինք Համաշխարհային բանկի մասնակցությամբ և ֆինանսական օժանդակությամբ, ենթադրում է, որ պետք է ձևավորվի նոր պլատֆորմ՝ մասնավոր հատվածի հետ համատեղ, ընդ որում կարևոր է, որ այս ծրագիրը մշակվել է հենց մասնավոր հատվածի ֆինանսավորմամբ և ակտիվ մասնակցությամբ, որը և հետագայում արժանացել է մեր համատեղ նիստի հավանությանն ու հաստատվել Կառավարության կողմից: Թիրախավորել ենք 12 ոլորտներ, որտեղ, ըստ ուսումնասիրությունների արդյունքների, առկա է արտահանման բավականին մեծ ներուժ, և պետության ջանքերը պետք է ուղղվեն այդ ներուժի իրացմանը: Տեղյակ եք, որ արդեն երկու ոլորտների շուրջ պետությունը համաձայնագրեր է ստորագրել մասնավոր հատվածի հետ, որով պարտավորություններ ենք ստանձնել, թե ինչպիսի գործողություններ պետք է իրականացնի պետությունը: Մասնավորն էլ իր հերթին փոխադարձ պարտավորություն է ստանձնել՝ իրականացնելու ներդրումներ, ավելացնել արտահանման ծավալները և ստեղծել նոր աշխատատեղեր: Կարծում եմ, որ այս ծրագիրն արդեն 2013 թ. տեսանելի կլինի մեր տնտեսվարողների համար:

Չորրորդ գերակա խնդիրը՝ մակրոտնտեսական կայունության ապահովումն է, որն էական նշանակություն է ունենալու: Այսօր բոլոր կանխատեսումներով՝ համաշխարհային տնտեսությունը գտնվում է բավականին վտանգավոր իրավիճակում: 2013 թվականի համար Արժույթի միջազգային հիմնադրամը և Համաշխարհային բանկը նվազեցնում են աճի տեմպերի իրենց կանխատեսումները: Երկրորդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ եթե նախկինում դա հիմնականում վերաբերվում էր զարգացած երկրներին, ապա առաջին անգամ տեսնում ենք, որ նվազեցվում են նաև զարգացող երկրների աճի տեմպերի ցուցանիշները: Դա նշանակում է, որ 2013 թվականին մենք պետք է բավականին զգուշավոր մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնենք՝ հաշվի առնելով հավանական ռիսկերի դրսևորումները: Ելնելով դրանից՝ այս պահին թիրախավորում ենք 6,2 տոկոս տնտեսական աճի ցուցանիշ՝ այս տարվա սպասված 7 տոկոսանոց ցուցանիշի դիմաց: Պետք է ունենանք բավարար պաշարներ, որպեսզի կարողանանք բացասական դրսևորումների ժամանակ չեզոքացնել այդ ռիսկերը: Մասնավորապես, այս պահի դրությամբ մենք Համաշխարհային բանկի հետ պայմանավորվածություն ունենք, որ եթե համաշխարհային բացասական ազդեցությունները մեր բյուջեի կատարողականի վրա բացասաբար ազդեն, ապա կկարողանանք անմիջապես ակնկալել 100 մլն դոլարի ֆինանսական օժանդակություն: Հակաճգնաժամային հիմնադրամում էլ ունենք 1 միլիարդ 100 մլն դոլար: Բացասական դրսևորումների պարագայում Հայաստանի Հանրապետությունը կարող է հիմնադրամից ակնկալել այս ֆինանսական միջոցների ստացումը՝ բացասական ռիսկերի չեզոքացման նպատակով:

Ցանկանում եմ նաև նշել, որ մենք էական ուշադրություն ենք դարձնելու այն բոլոր ծրագրերին, որոնք սկսել ենք իրականացնել 2012 թ., որոնք ունենալու են շարունակական բնույթ: Մասնավորապես, **առողջապահության ոլորտում ուշադրության կենտրոնում ենք պահելու մարզերում առողջապահական ծառայությունների մատուցման որակի բարելավումը:** Տեղյակ եք, որ նախորդ երկու տարիների ընթացքում մեծածավալ ֆինանսական միջոցներ հատկացվեցին, որպեսզի մարզերում ունենանք առողջապահական ժամանակակից կենտրոններ, որոնք ոչնչով չեն զիջում այն առողջապահական կենտրոններին, որոնք այսօր առկա են Երևանում՝ դրանով իսկ նպաստելով նաև մարզերի համաչափ զարգացմանը: Այս ծրագիրը շարունակվելու է: Պետական բյուջեի ֆինանսավորմամբ ծրագրում ենք կառուցել 13 համայնքային ամբուլատորիաներ, ինչպես նաև մարզկենտրոններում շարունակելու ենք առողջապահական հիմնարկների վերանորոգման աշխատանքները: Առողջապահության ոլորտում մեզ համար կարևոր նշանակություն է ունենալու ֆինանսական մեխանիզմների կատարելագործումը: Ազգային ժողովին կներկայացնենք նաև այն նոր հայեցակարգը, որը հաշվի է առնելու ինչպես միջազգային լավագույն փորձը, այնպես էլ այն թերությունները, որոնք այսօր առկա են Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի ֆինանսավորման մեխանիզմներում: Դա վերաբերվում է պետպատվերին, համաֆինանսավորման, ապահովագրական մեխանիզմների կատարելագործմանը, դեղերի գնման գործընթացին, ինչպես նաև ծառայությունների գների կարգավորման նոր մեխանիզմների ներդրմանը:

Մեզ համար երկրորդ կարևորագույն ոլորտը կրթությունն է: Կրթական բարեփոխումները նույնպես գտնվելու են մեր ուշադրության կենտրոնում: Ընդ որում, ցանկանում եմ տեղյակ պահել, որ 2013 թ.-ին մտադիր ենք անցկացնել դոնորների հավաք: Արդեն իսկ նախապատրաստել ենք մի մեծ ծրագիր, որն իր մեջ ներառում է 31 բարեփոխումներ և ենթակառուցվածքների ֆինանսավորում: Աշխատում ենք Եվրամիության, Ռուսաստանի Դաշնության մեր գործընկերների հետ, որպեսզի 2013 թ. դոնորների հավաքը դառնա իրականություն: Ցանկանում եմ տեղյակ պահել, որ ակնկալում ենք առնվազն 300 մլն դոլար ստանալ դոնորներից, որը պետք է ուղղվի դպրոցաշինությանը: Այսօր, ցավոք, դեռևս մեծ է այն դպրոցների քանակը, որոնք կապիտալ վերանորոգման կարիք ունեն. 1400 դպրոցներից առնվազն 300-ն ունի հիմնանորոգման կարիք: Պետական բյուջեով ձեզ կներկայացնենք դպրոցների հստակ ցուցակ, որտեղ հիմնանորոգման աշխատանքներ ենք իրականացնելու, միևնույն ժամանակ, ֆինանսական միջոցները բավարար չեն, որպեսզի բոլոր դպրոցները, որտեղ վերանորոգման աշխատանքներ ենք սկսել, հասցնենք իրենց ավարտին:

Ցանկանում եմ անդրադառնալ նաև պետական բյուջեի ծախսերի տրամաբանությանն ըստ տոկոսների, որպեսզի հասկանալի լինի, թե ինչպես ենք իրականացնում մեր ծախսային քաղաքականությունը: Մասնավորապես, 2013 թ. պետական բյուջեի նախագծով ծախսերի գերակշիռ մասը՝ 84,7 տոկոսը, հետևյալ հինգ ոլորտներն են ներառում. սոցիալական բնագավառի ծախսեր՝ 41,8 տոկոս, այս բնագավառն իրենում ներառում է կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանվածության ոլորտները: Երկրորդ ուղղությունը պաշտպանությունն է՝ հասարակական կարգի պահպանությունը և ազգային անվտանգության ապահովման ոլորտը, որտեղ մեր ծախսերը կազմելու են 21,1 տոկոս, տնտեսության ճյուղերը՝ 14,1, պետական պարտքի սպասարկումը՝ 4,6 տոկոս: Համայնքների բյուջեների ֆինանսավորման համահարթեցման դոտացիաների համար տրամադրելու ենք բյուջեի 3,1 տոկոսը: Ընդ որում, էական ուշադրություն ենք դարձնելու արտաքին պարտքի ցուցանիշին:

Հայաստանը, միջազգային կազմակերպությունների գնահատականներով, 2013 թ. դասվելու է միջին կամ ավելի ցածր ծանրության բեռ ունեցող երկրների շարքին: Թույլ չենք տալու, որպեսզի արտաքին պարտքի կառավարումը համարվի ռիսկային:

Ավարտելով խոսքս, ցանկանում եմ նշել, որ դժվար է գերագնահատել պետական բյուջեի դերը պետության բնականոն զարգացման գործում: Այդ տեսակետից, ԱԺ-ում քննարկումները մեզ համար ունեն էական նշանակություն: Ակնկալում ենք պետական բյուջեի կառուցողական, շահագրգիռ քննարկում: Հավաստիացնում եմ, որ մենք պատրաստ ենք այդ երկխոսությանը: Շնորհակալություն ուշադրության համար:

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ կառավարությունը սեպտեմբերի 27-ի նիստում հավանության է արժանացրել «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ըստ որի հաջորդ տարի պետական բյուջեի եկամուտը կկազմի 1 տրլն 32.9 մլրդ դրամ, ծախսը՝ 1 տրլն 152.7 մլրդ դրամ, դեֆիցիտը՝ 119.7 մլրդ դրամ:

2013 թվականի ՀՀ համախմբված բյուջեն կանխատեսվում է եկամտի գծով՝ 1 տրլն 59.1 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսի գծով՝ 1տրլն 183.1 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների) և դեֆիցիտը՝ 124.0 մլրդ դրամ:

ՀՀ համայնքների բյուջեների ծավալը գնահատվել է եկամուտների գծով՝ 97.5 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները), ծախսերի գծով՝ 101.7 մլրդ դրամ, դեֆիցիտի գծով՝ 4.2 մլրդ դրամ:

Բյուջե 2013-ի առաջնահերթությունները

ՀՀ կառավարության հիմնական ռազմավարական գերակայությունները սահմանված են 2012 թվականի հունիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած ՀՀ կառավարության ծրագրով, ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունած Կայուն զարգացման ռազմավարական ծրագրով և ՀՀ 2013-2015 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով: Դրանք են՝

- սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակը բարձրացնելու, դրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,
- հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանի կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,
- տնտեսության առանձին ոլորտներում ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ 2013 թ. պետական բյուջեից ծախսերի հիմնական ուղղություններին բաշխվող հատկացումների տեսակարար կշիռները (տոկոսով)՝ պետական բյուջեի ընդհանուր ծախսերում.

Ուղղությունները	Տեսակարար կշիռները ՀՀ 2013թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված ընդհանուր ծախսերում (տոկոս)
1. Սոցիալական ոլորտ	41.8
2. Պաշտպանություն, ազգային անվտանգություն, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր	21.1
3. Տնտեսության ճյուղեր	14.1
4. Պետական պարտքի սպասարկում	4.6
5. Տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաներ	3.1

Եկամտի 120 մլրդ դրամի ավելացմամբ հարկային բեռը չի ավելանալու

2013 թվականի եկամուտը ծրագրվել է 1.031.6 մլրդ դրամ, 2012-ի համար ծրագրված 911.6 մլրդ դրամի դիմաց 120.0 մլրդ դրամով ավելի: 2013 թվականի համար լրացուցիչ ծրագրված գումարի գերակշիռ մասը՝ 118.6 մլրդ դրամը, ակնկալվում է ապահովել հարկային եկամուտների և պետական տուրքերի, 1.3 մլրդ դրամը՝ այլ եկամուտների և 0.1 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների մասով:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամտի կառուցվածքը (տոկոսով ընդհանուրի նկատմամբ)



Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով 2013 թվականի բյուջետային մուտքերի կազմում 118.6 մլրդ դրամ լրացուցիչ գումարից շուրջ 60.0 մլրդ դրամն ապահովվելու է այլ հավասար պայմաններում ի հաշիվ կանխատեսվող մակրոտնտեսական միջավայրի փոփոխության, 31.0 մլրդ դրամը՝ օրենսդրական փոփոխությունների, իսկ 27.6 մլրդ դրամը՝ վարչարարական միջոցառումների իրականացումից: Նշված 31.0 մլրդ դրամը ծրագրվել է 2013 թվականի հունվարի 1-ից զինծառայողներին, նրանց հավասարեցված անձանց և փրկարարական ծառայության ծառայողներին եկամտային հարկի դաշտ ներառելու արդյունքում ակնկալվող լրացուցիչ մուտքերի հաշվին (համապատասխան ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության կողմից ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով): Հարկ է նշել, որ նշված օրենսդրական փոփոխության արդյունքում առաջացող հարկային պարտավորության բեռը կրում է ՀՀ պետական բյուջեն, քանի որ այն չի ենթադրում նշված խումբ հարկ վճարողների մինչ հարկման դաշտ բերելը ստացվող եկամտի նվազեցում եկամտային հարկով հարկումից հետո:

Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի հետ ՀՀ Ազգային ժողով ներկայացված ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող ՀՀ օրենքների այլ նախագծերով հարկային բեռի ավելացում նույնպես չի նախատեսվում:

Առաջին անգամ բյուջեն գերազանցում է 1 տրլն դրամի սահմանը

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալը բաշխվել է ըստ հետևյալ ուղղությունների.

- **սոցիալական պաշտպանություն՝** 303.2 մլրդ դրամ (որից զանազան նպաստները՝ 50.8 մլրդ դրամ, կենսաթոշակը՝ 199.3 մլրդ դրամ, պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթը՝ 19.5 մլրդ դրամ, օրենքով նախատեսված դրամական օգնությունը և պատվովճարը՝ 8.9 մլրդ դրամ, խնայբանկում ներդրված ավանդների փոխհատուցումը՝ 1.7 մլրդ դրամ),
- **կրթություն՝** 108.3 մլրդ դրամ (որից նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթությունը՝ 24.2 մլրդ դրամ, միջնակարգ ընդհանուր կրթությունը՝ 48.9 մլրդ դրամ, նախնական մասնագիտական/արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունը՝ 6.4 մլրդ դրամ, բարձրագույն կրթությունը՝ 7.9 մլրդ դրամ),
- **առողջապահություն՝** 70.2 մլրդ դրամ (որից հիվանդանոցային ծառայությունները՝ 27.3 մլրդ դրամ, արտահիվանդանոցային ծառայությունները՝ 23.9 մլրդ դրամ),
- **մշակույթ, սպորտ և ռադիո-հեռուստահաղորդումներ՝** շուրջ 18.0 մլրդ դրամ,
- **ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝** 207.9 մլրդ դրամ (որից պետական պարտքի սպասարկումը՝ 52.5 մլրդ դրամ, տեղական ինքնակառավարման մարմիններին ֆինանսական համահարթեցման համար դոտացիայի տրամադրումը՝ 36.2 մլրդ դրամ, գիտության գծով՝ 9.7 մլրդ դրամ, պետական կառավարման մարմինների պահպանման ծախսի և որոշ մաքսակետերի արդիականացման նպատակով՝ 64.9 մլրդ դրամ),
- **պաշտպանություն՝** 184.6 մլրդ դրամ (ներառյալ ռազմական կարիքների բավարարումը՝ 177.8 մլրդ դրամ)
- **հասարակական կարգի պահպանում, ազգային անվտանգություն և դատական գործունեություն՝** 72.2 մլրդ դրամ,
- **տնտեսության ճյուղեր՝** 162.4 մլրդ դրամ,
- **ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ՝** 24.6 մլրդ դրամ:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալը՝ ըստ ուղղությունների



Բյուջեի սոցիալական պատկերը. ինչ կստանա շարքային քաղաքացին 1 տրիլիոնանոց բյուջեից

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով հիմնականում պահպանվել են ինչպես աշխատավարձի, այնպես էլ թոշակի և նպաստի նախորդ տարվա մակարդակները: Միջին աշխատավարձի և թոշակի առկա որոշ բարձրացումը պայմանավորված է 2013 թվականին նվազագույն աշխատավարձի չափի 2500 դրամով նախատեսվող ավելացման և աշխատողների աշխատավարձի և թոշակի բնականոն աճով (ստաժի ավելացում, պաշտոնի փոփոխություն և այլն), բարձրացում է նախատեսված միայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով զոհվածների ընտանիքներին, ինչպես նաև հաշմանդամ դարձած շարքային զինծառայողներին տրվող թոշակի մասով շուրջ 17 տոկոսի չափով:

Դրա հետ մեկտեղ, Նախագծով միջոցներ են նախատեսված երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության գծով (ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի 9 կիսակառույց շենքերի շինարարական աշխատանքները 2013 թվականին ավարտելու համար), զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման համար (որով նախատեսվում է լուծել 46 ընտանիքի՝ բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման խնդիրը), անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայատերերի ներդրված միջոցների դիմաց պետական օգնություն տրամադրելու, ինչպես նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում տալու գործընթացը շարունակելու համար:

Նախագծով միջոցներ են նախատեսված նաև գյուղական համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման համար (վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացման նպատակով):

Սոցփաթեթում նախատեսվող փոփոխություններ

2013 թվականին զգալիորեն կավելանա սոցիալական փաթեթից օգտվողների թիվը. 2012 թվականի 117 հազ. մարդու դիմաց 2013 թվականին այն կկազմի շուրջ 148 հազ. մարդ: Եթե 2012 թվականի սոցիալական փաթեթից օգտվում էին պետական մարմինների, կրթության, մշակույթի և սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին պետական կազմակերպությունների վարչական և մասնագիտական պաշտոն զբաղեցնող անձինք, ապա 2013 թվականին սոցփաթեթից կօգտվեն այդ կազմակերպությունների բոլոր աշխատողները՝ բացառությամբ բարձրաստիճան պաշտոնատար անձանց: 2013 թ. ՀՀ պետական բյուջեի նախագծով սոցիալական փաթեթի համար նախատեսվել է 19 մլրդ 532 մլն դրամ:

Կառավարության ծրագրի գերակա խնդիրները Բյուջե 2013-ում

ՀՀ կառավարությունը 2013 թվականին հետևողականորեն շարունակելու է մեկնարկած բարեփոխումները՝ գործարար միջավայրի բարելավման, իրական հատվածի աջակցության, գիտելիքահեն տնտեսության ենթակառուցվածքների զարգացման և, ընդհանուր առմամբ, տնտեսության դիվերսիֆիկացման մեծացման ու արտահանելի հատվածի ընդլայնման ուղղությամբ՝ նպատակ ունենալով բարձրացնել երկրի մրցունակությունը:

Համաշխարհային տնտեսական իրավիճակով պայմանավորված նոր մարտահրավերները դիմակայելու և տնտեսության հետճգնաժամային զարգացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության 2013 թ. իրականացվող առաջնահերթ միջոցառումներ կհանդիսանան.

Գործարար և ներդրումային միջավայր

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը շարունակելու է մնալ ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների օրակարգում՝ առանցքային շեշտադրումն ուղղելով ձեռնարկատիրության զարգացմանը, ռիսկի վրա հիմնված ստուգման համակարգի կայացմանը, կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանը, կարգավորման ազդեցության գնահատման համակարգի բարելավմանը, վարչարարության և տնտեսվարողների ծախսի նվազեցմանը: 2013 թ. կկարևորվի վերազգային ընկերությունների ներգրավման և ազատ տնտեսական գոտիների ստեղծման գործընթացը՝ հաշվի առնելով դրանց առանցքային նշանակությունը նոր տեխնոլոգիաների փոխանցման, իրացման շուկաների ընդլայնման և աշխատանքի բարձր արտադրողականության ապահովման գործում:

Էներգետիկայի բնագավառ

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն նպատակաուղղվելու է ՀՀ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ էներգամատակարարման հուսալիության ապահովմամբ, էներգախնայողության միջոցառումների լայնամասշտաբ ներդրմամբ և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են լինելու միջուկային նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքի համակարգումը, սեփական վերականգնվող էներգապաշարի իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

Գյուղատնտեսություն

ՀՀ ագրարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2013 թ. կնպատակաուղղվի գյուղատնտեսության և այն սպասարկող կառույցների, գյուղմթերքի իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Դրա հիման վրա կստեղծվեն ագրոպարենային ոլորտի կայունացման, հետագա զարգացման ու ընդլայնված վերարտադրության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամտի ավելացման, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման, հիմնական պարենամթերքների ինքնաբավության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման պայմաններ:

Տրանսպորտ և կապ

Բնագավառում 2013 թ. իրականացվելիք քաղաքականության հիմնական նպատակը շարունակում է մնալ փոխադրումների և հուսալի կապի իրականացման ապահովումը՝ գոյություն ունեցող ճանապարհների (երկաթուղային, ավտոմոբիլային) ամբողջական ու արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու և երկաթուղու շինարարությամբ ու կապի համակարգերի կատարելագործմամբ:

Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափոխադրման հուսալիության և արդյունավետության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել առաջնահերթ վերականգնման կարիք ունեցող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շուրջ 30.43 կմ ճանապարհահատվածի, ինչպես նաև 6 տրանսպորտային օբյեկտի հիմնանորոգման աշխատանք:

Քաղաքաշինություն

Շինարարության ոլորտում 2013 թ. ընթացքում կարևորվելու է կրթական և մարզական օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների շարունակականությունը, ինչը կնպաստի կրթական համալիրի վերազինմանը, ուսման, մարզական կյանքի և անհրաժեշտ ծառայությունների մատուցման մակարդակի էական բարձրացմանը:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարությունե ծրագիրը ևս կկրի շարունակական բնույթ, ապահովելով աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարությունը ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում:

Գնաճը և բյուջեն

2011 թվականի սկիզբը բնութագրվում էր բարձր գնաճային միջավայրով, որը թելադրված էր 2010 թվականի ընթացքում միջազգային շուկաներում հումքային և պարենային ապրանքների գների աճի, ՀՀ-ում գյուղատնտեսության ճյուղի խորը անկման պայմաններում այդ ճյուղի առաջարկի կրճատման, նշվածի հետևանքով արձանագրված բարձր գնաճի երկրորդային ազդեցության պայմաններում ձևավորված բարձր գնաճային սպասումներով: Ընդ որում, մարտի վերջին գրանցվել էր 12-ամսյա գնաճի վերջին երեք տարվա ամենաբարձր մակարդակը՝ 11.5 տոկոս, իսկ հաջորդող ամիսների ընթացքում գնաճային միջավայրը աստիճանաբար մեղմվել է, ինչի արդյունքում էլ տարին ամփոփվել է գնաճի տարեկան 4.7 տոկոս ցուցանիշով՝ գտնվելով տատանման թույլատրելի միջակայքում: Նշենք, որ տարվա ընթացքում 12-ամսյա գնաճի նվազողական վարքագիծը հիմնականում պայմանավորված է եղել տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացմամբ, արտաքին շուկաներում պարենային և հումքային ապրանքների գների որոշակի կայունացմամբ, իրականացված հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությամբ և նախորդ տարվա համեմատությամբ տեղական արտադրության գյուղմթերքի թողարկման ծավալի աճի պայմաններում դրանց գների նվազմամբ (2011 թվականի ապրիլ-սեպտեմբեր ժամանակահատվածում գրանցվել է 4.4 տոկոս գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.4 տոկոս գնաճի դիմաց):

2012 թվականի անցած ութ ամիսների ընթացքում գնաճը շարունակել է դրսևորել նվազողական վարքագիծ, որի արդյունքում օգոստոսի վերջին 12-ամսյա գնաճը կազմել է 2.5 տոկոս: Վերջինս պայմանավորված է բացառապես պարենային ապրանքների գների անկմամբ, այն դեպքում, երբ ոչ պարենային ապրանքների գները և ծառայությունների սակագները հիմնականում արձանագրել են սպասված աճը: Նշենք, որ դեռևս 2010 թվականի կեսերից, երբ դիտվեց գյուղատնտեսության ճյուղի թողարկման ծավալի զգալի անկում, տեղական արտադրության գյուղմթերքի գների սեզոնային ավելի քիչ նվազման ազդեցությամբ ձևավորվեց 12-ամսյա գնաճի բարձր մակարդակ: Այնուհետև, անցած երկու տարվա ընթացքում, գյուղատնտեսության ճյուղի զարգացման (2011 թվականի տարեկան աճը՝ 13.6 տոկոս, 2012-ի առաջին կիսամյակի տ/տ աճը՝ 8.4 տոկոս) արդյունքում տեղական արտադրության գյուղմթերքի առաջարկված մեծ ծավալը հանգեցրել է դրա գների շարունակական նվազմանը: Նշված գործոնով էլ պայմանավորված՝ 12-ամսյա գնաճի ցածր մակարդակի ձևավորմանը գերակշռող նպաստում է ունեցել պարենային ապրանքների գների փոփոխությունը: 2012 թվականի հունիսին պարենային ապրանքների 12-ամսյա 0.9 տոկոս գնանկմանը մեծապես նպաստել է «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբի գների 21.4 տոկոս անկումը: Ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գներն աճել են համապատասխանաբար տ/տ 3.9 և 1.9 տոկոսով:

Նշված ծամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը (8.0 տոկոս): Դա պայմանավորված էր հիմնականում երկու գործոնով. նախ, մայիս-հունիս ժամանակահատվածում դիտված դրամի արժեզրկումն արդեն իսկ դրամավարկային պայմանների թուլացում էր և երկրորդ՝ 12-ամսյա բնականոն գնաճն այդ ընթացքում մշտապես գտնվել է գնաճի նպատակային ցուցանիշի սահմանում: Մյուս կողմից, 12-ամսյա գնաճի վերջին ամիսներին ձևավորված ցածր մակարդակն առավելապես պայմանավորված է եղել գյուղմթերքի գների անկման ընդգծված սեզոնայնությամբ, որի ազդեցությունը գնաճի վրա մինչև տարեվերջ կվերանա և կանխատեսվող հորիզոնում այն կմոտենա իր նպատակային ցուցանիշին՝ պահպանվելով 4 (+/-1.5) տոկոսային կետ տատանման թույլատրելի միջակայքում:

Կանխատեսում: Նշված տվյալները թույլ են տալիս ակնկալել, որ 2012 և 2013 թվականների համար գնաճը կպահպանվի նպատակային թիրախի 4 (+/-1.5) տոկոս տատանման թույլատրելի միջակայքում և 12-ամսյա գնաճը կկազմի շուրջ 4 տոկոս:

2000-2013 թվականների գնաճի (ՍԳԻ) դինամիկան



Պետական պարտքի սպասարկումը և բյուջեն

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծի համաձայն նախատեսվում է, որ 2013 թվականին ՀՀ կառավարության պարտքի սպասարկման (տոկոսավճար) ծախսը կկազմի 52.5 մլրդ դրամ կամ պետական բյուջեի ծախսի 4.6 տոկոսը: Նշված գումարից ՀՀ կառավարության ներքին պարտքի սպասարկմանը կհատկացվի 29.9 մլրդ դրամ, իսկ ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկմանը՝ 22.6 մլրդ դրամ կամ 56.0 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն

Տպաքանակը՝ 7000: